# ՔՐԱՇՔԱԹ ՍՊԸ

ք.Երևան, Կոմիտաս 59/7շենք, 71բն.
Հեռ.: +37496666656, էլ. փոստ: levonavetisyan1987@hgmail.com

29 հունվարի 2026թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

«Քրաշքաթ» ՍՊ ընկերությունը 2024 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ ԵՀԹ-29/406 թույլտվությունը:

Համաձայն Պ-406 պայմանագրի 4.4 կետի 4.4.11 ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

2025 թվականի աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- նավթամթերքներով երևակման տարածքի հողերի աղտոտվածության մշտադիտարկում,
- տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում),
- աղմուկի մակարդակ Մայակովսկի գյուղի մոտ:

Տեղամասի տարածքում մթնոլորտային օդում փոշու, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները ընդունվել են համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ-ի ժամանակավոր առաջարկությունների

Ներկայացնում եմ իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

«Քրաշքաթ» ՍՊԸ
տնօրեն՝ Ա. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № Ն-1113
29. 01 2026թ.

ՔՐԱՇՔԱԹ КРАШКАТ CRASHCUT 00519576